



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 39

— ՏԵ ՇԱՐԱՐ —

24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՕԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՏՀԱՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Շր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՅՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշտ Պոլիս խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղութիւն ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐԲԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի Գաւառի քիւ 23



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ աննդային մասերն եզան մօին, ուղեղին, ողնուղեղին և փոսփաթներն ոսկրային կազմուածքին, խաացեալ վիճակի մէջ :

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինոս համբաւուր բռնիչներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'ըզան ուժասպառութիւն, դաշտութիւն, անասնաբուժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղայիւն սկստութիւն, նիւարութիւն, կործիւ սկստութիւն, անարիւնութիւն և ընդհանուր մը գործածութիւնը կը հաստատէ իւր անզուգական յասկութիւնը :

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ, Պահճէ-գարու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը : Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով :

50—9



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/Ո 39

ՇԱԹԱԹ

24 Սեպտեմբեր 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամսառ ա՛կնարկներ (խմբագրական) . — Լ. ՄԱՐԳԱՐԵԱՆ : Կեանքի զրուագներ (Բարի պտուղ) . — Լ. ՇԱԹՐԵԱՆ : Ծաղիկներ (Ոսանաւոր) . — ՀՐ. Յ. ՄՈՄՃԵԱՆ : Վերջին բացատրութիւններ . — ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ : Նորեկուկ բառարան . — ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ : Առեւտրաստեղծի մը յուշեր . — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՅ : Ցիւռու ցան խօսքեր . — Ա. ԻՍՊԷՉԱՐԵԱՆ : Քրոնիկ (288 ժամուան գրական աշխատակցութիւն մը) . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ : Գոց նամակ (Ծաղիկ կանաչի հանգստի զամբիւղէն գողցուած) . — ՈՒՍՏԻԿ : Շաբթուան լուրեր :

ԱՆԱԶԱՌ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ամէն առթիւ ու առէն պատահութեամբ յաւիտենական յանկերգի մը հանգունակ սովորեր ենք միշտ կրկնել թէ՛ մեր երիտասարդութիւնը շուայտ ու ցոյի է, թէ ապագան չի մտածեր շատ հեղ, թէ օգերուն մէջ կ'ապրի շատ առտեն, և թէ դրական կեանքը ոչ մէկ հրապոյր կ'ընծայէ իրեն համար : Ըսեր ենք ատենք առանց համբերութիւնն ունենալու մետալին միւս կողմը դարձնելու, և անդրադառնալու այն պատճառներուն որոնցմով մեր երիտասարդութիւնը, իրաւամբ շատ անգամ արդարացի պիտի ելլար իր բռնած արդի ընթացքին մէջ, որ ճիշդն ալ խօսելով մոլութենէ, ցոփութենէ շատ իսկ հեռու է, և որով կուզենք որակել զինքը անիրաւաբար :

Զգեալով մէկ կողմ՝ շնորհիւները, որոնք բախտին նպաստաւորութենէն են և որոնց դէմ ոչ ոք կը խորհի բան մ'իսկ ըսել, մեր երիտասարդութիւնը ընդհանրապէս կը պատկանի, ինչպէս ամէն ազգի, նոյնպէս և մերինն միջնա-կարգ և ազգատ գասակարգերուն :

Արդ՝ միջնակարգ ընտանիքի զաւակ երիտասարդ մը երբ գործի մը փա-րելու յաջողի, կրնայ ամսական հինգ, վեց ոսկի շահիլ : Այս դուամարը շատ

մեծ պիտի երեւայ շատ մը անձերու, և դասեր պիտի տան ստակ աւելցնելու, դրամ գիշերլու մասին: Բայց ի՞նչպէս պիտի կրնայ վեց ոսկի ամսականաւոր երիտասարդ մը, որ գիտէ ու կ'ուզէ իսկ իր տարիքին պահանջման համեմատ ապրիլ, դրամ գիշերլու:

Երիտասարդի մը առաջին փափաքն է լու հագուիլ, չքեղ երեւնալ, ասիկա բնական բան մըն է, և ո՞վ որ կ'ուզէ այս մասին հակառակը պնդել՝ կեղծաւորութեան սահմաններուն վրայ դեգերած պիտի ըլլայ: Աւելորդ է հիմա երկար բարակ հաշիւը տալ զանազան ծախքերուն, որու անհրաժեշտօրէն պէտք կ'ունենայ ու է երիտասարդ:

Փռանքիւնի օրական տասը փարայ աւելցնելով դրամ գիշերլու փոխաւորութեան դարերը անցան հիմա, և արդէն այսչափ միլիոնաւոր ժողովուրդներու մէջ եթէ հարուստներու համեմատութիւնը փնտռենք, հազիւ մէկ առ հարիւր հազար պիտի ելլայ: Ճիշդ է թէ հաշիւը գիտնալու է մարդ, բայց հաշիւը գիտնալու համար ալ առատ եկամուտ ունենալու է, և եկամուտ ունենալու համար, միշտ բազմաթիւ ձեռնառու ըլլալու է իրեն: Քանի քանի՝ արժանաւոր երիտասարդներ, անօթի ծարաւ փողոցները կը չափչփեն, մինչ անդին երկու խօսք քով քովի չ'ընել գիտցողներ յաջող գիրքերու հասած են: Հետեւաբար մեր երիտասարդութիւնը քամահիւրէ, անոր անդոյ պակասութիւններ ու մոլութիւններ վերագրել անխիղճ գործ մը պիտի ըլլար, կեանքի այս բազմապահանջ վիճակին մէջ: Ու արդէն մեր նոր սերունդը ընտիր բարեմասնութիւններով օժտուած է, և մէկ քանի բացառութիւններ ընդհանուր կանոն մը չ'են կազմեր բնականաբար: Այս տողերը սակայն, աւելորդ է ըսել, պէտք չ'է գրգիռ մ'ըլլան մեր կարգ մը այն սղաքներուն, որոնք պատանեկութեան մէջ դեռ նոր մտած ու գործի մը կառչած, ինքզինքնուն չափահասի հովեր կուտան: Պատանեկութիւնը մեր մէջ, վստահ եղէք, աւելի հակամէտ է շռայլօրէն մտնող մը մոլութեանց հակամէտ ըլլալու քան չափահասները, ու այս երեւոյթը անփորձութեան վերագրելի է միայն: Վաղը, միւս օր երբ կեանքի մէջ տաքն ու պաղը անցնի գլուխնուն, բնական է թէ պիտի ջանան ժողովել ինքզինքնին, և շատ երջանիկ պիտի ըլլան, եթէ իրենց փոխորկայոյզ պատանեկութեան շրջանին մէջ ձախորդութեան ու վշտի մը չ'հանդիպին: Մաքուր պատանեկութիւն մը արդէն մաքուր երիտասարդութեան մը նախադուռն է:

Պէտք է մեր երիտասարդները գիրքի մը հասնելու, նիւթապէս բարդաւաճելու համար սա առածին հետեւիկ որ կ'ըսէ « փոխանակ խնայելու, դրամ չահելու միջոցներդ շտապուր »:

Շատցողը դրամ չահելու միջոցներդ, բայց ամէն բանէ առաջ բազմապէս պէտք է նորէն, անյիշատար ու կոյր բազմաթիւ օր քու ձեռքէդ բռնած տարտամ քայլերդ պիտի առաջնորդէ ապրուստի դժուարին տրահատին մէջ:

Լ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐ

ԲԱՐԻ ՊՏՈՒՂ

Բարի, ազնուական կնոջ մը տիպարն էր որ թաղին մէջ համակրանքի առարկան դարձած էր ամենուն . իր դէմքէն շնորհքն ու ազնուութիւնը կը կաթկթէր և հակառակ քսան տարուան ամուսնացած ըլլալուն, դեռ չի կնուսի կարմիրները իր դէմքը կը շառագունէին խոր ակնարկի մը սեւեռումին տակ : Օր տեսած ու օր անցուցած մէկը չ'էր այս կինը, իր ամուսնութիւնը — դաժան էրկան մը կապուելով — դժարազուլութեան ու ձախորդութեան նախագուռը եղեր էր իրեն, և օր մը իսկ հանգիստն ու հրճուանքը չ'էր ճանչցած ամբողջ այս քսան տարուան միջոցին, որ մտածումի ու տխրութեան երկար ժամանակամիջոց մը եղեր էր : Բայց օր մը օրանց ոչ ոք իր բերնէն տրտունջի բառ մը լսեր էր, և գաղտնապահութեան ու լուռ համակերպութեան մէջ կըրցեր էր դիւցազնութիւնն ունենալ այս երկար տոկումին, որ տոկումներուն ամենէն ցաւալին և ամենէն տխրառիթն էր : Խստապահանջ, բարկացող ամուսնի մը ճնշումին տակ, առանց ձայն ձուռն հանելու շատ գիշերներ անօթի պառկեր էր, իր արցունքները խեղդելով բարձրուն, վերակներուն տակ : Առաքինութեան մարմնացումը այս կնոջմէն աւելի կատարեալ ու անթերի չ'պիտի ըլլար որ գաղտնիքը գտեր էր գոհ և երջանիկ երեւոյթի մը տակ սրտի դաւնութիւններն ու հոգիին տառապանքները սքողելու : Համակերի էին ամենն անոր և իրաւամբ :

Ու օր մըն ալ ամուսնոյն մահը յանկարծակի իջած լախտի մը պէս, վերջնական հարուածը տուաւ իրեն, ապրուստի միջոցներէ բոլորովին զրկուեցաւ : Ծառեր այս մահը փրկագործում մը նկատէին այս կնոջ համար : Բայց ինք որ հոգիին չափ իր ամուսինը կը սիրէր, հակառակ բոլոր այն ցաւաւորութեան տաժանագին զրկումներուն ու անարգանքներուն, զորս այս մարդը կը տեղացնէր իր վրայ, օրերով, ամիսներով և ցաւաւ այս մահուան համար, և զաւակին

սիրովը ոգեւորուած, գօտեպնդուած, զաւակ մը միայն ունէր, որովհետեւ որ առանձնակեցը դեռ նոր կոխած էր, տարբեր կեանք մը սկսաւ, աշխատութեան, չարաչար վատակի կեանք : Հոգարտ էր, ոչ ոքի բերան ծուեց իր չքաւորութիւնը յայտնելու, բնաւ ուրիշներ իր տեղը և կեղեցիկն դուռը, կամ ասոր անոր պիտի դիմէին դիւրաւ ստացուելիք օգնութեան մը յուսովը տոգորուած, բայց ինք այս բանը չ'ըրաւ :

Փոխանակ ուրիշներու՝ իր բազուկներուն միայն վստահեցաւ և օրական ապրուստը առաջունէ աւելի լաւագոյն պայմաններու մէջ ճարելով, իր զաւակին սէրը միայն գօրավիզ ունեցաւ իրեն : Իրիկունները յոգնած, դադրած, երբ ալ մատները կարողութիւն չ'էին ունենար վրանին շարժելու անգամ, սիրեց այս կինը միտքարուել սիրովը իր զաւակին, որ հոգիին չափ և թեւեւ անկէ ալ աւելի կը սիրէր : Ամէն ջանք թափեց կարօտ չ'ձգելու իր համատի մանուկներուն քով անիկա, և ամէն տեսակ խնամքներով չըջապատեց զանիկա . կարելի չ'էր երեւակայել մայր մը իրմէն աւելի պարտաճանաչ ու գուրգուրազին, որ իր կեանքը զաւակին համար բոլորանուէր առուած ըլլար : Բայց այս չափազանց սէրը, այս չափէն աւելի աղապատանքն ու խանդաղատանքը միասաբեր հանգամանք մը առին տղուն համար, որ սանձարձակ պայմաններու մէջ մեծցած, անհոգ, անզգայ արարած մը դարձաւ :

Սէրը զարմանալի երեւոյթներ ունի արդէն, երբ դիմացինդ ամբողջ հոգիովդ քեզ կը սիրէ, կարծես քու սէրդ ալ ան իւրացուցած կ'ըլլայ իր մէջ, և դուն չ'ես կրնար գիտնալ թէ ինչո՞ւ խորշիլ, խոյս տալ կուզես այս սիրոյ ընկճող բեռին տակ, և զարմանալիօրէն որչափ կրկնապատկուի թափը քեզ սիրովին, այնքան խորշումն ու յափառացումը կը շատնայ, կը բազմապատկուի քովդ : Ծիշդ այս երեւոյթը տեղի ունեցեր էր տղուն համար, և իր մօրը իրեն համար թափած ջանքերուն փոխարէն ցուրտ վերաբերում մը միայն տաժած էր անոր հանդէպ, և սրտին մէջ սիրոյ, խանդաղատանքի ու էէ թել չ'էր թրթռացեր այս առաքինի ու տի-

պար մօրը համար : Տարիները անցան այսպէսով և քսանին երբ մտաւ տղան , զեղխութեան ու շուայտութեան տուաւ բոլորովին ինքզինքը . այսօր հոս , վաղը հո՛ն , թափառական ու վաչկատուն կեանք մը սկսաւ վարել և գինին ու օղին իր յարակիցներով անբաժան ընկերներն ու մտերիմներն եղան իրեն . խրատներ , տրցունքներ մօրը կողմէն , ոչ մէկ ծագաւ ունեցաւ այս անուղղայ տղան դարձի քերելու : Աւելն իրիկուն գինով , երբուն կը վերադառնար տուն և մօրը հազար աքնումներով վաստակած մէկ մէծիւրը անխղճօրէն կը գրպանէր , բռնութեամբ և հոյն իսկ ծեծի դիմելով : Մայրը տղուն հարուածներուն քով բան մը չ'էր խօսեր , կը լռէր , միամիտ ու հեզ լուծութեամբ մը : Ինչ ըրեր , որուն չարիք մը ըրած էր այս կինը , ինք ալ չ'էր գիտեր , որ հանգիստ երբէք չ'էր ճանչցած ամբողջ կենաց տեւողութեան միջոցին . ուրիշներ , անպատուութեան մէջ քալողներ , հանգիստ կեանք մը ունեցեր էին և բազմալուստ ժպտուն մնացեր էր անոնց , ինչո՞ւ ճակատադրին այս անիրաւութիւնը իրեն հանդէպ , ինք որ մօր , ընտանեաց արի ու բարի պիտի պարտականութեան մէջ երբէք չ'էր թեքուեր , ու ինքզինքը ընտանիքին միայն նուիրեր էր :

Ան գիշեր նորէն գինով վիճակի մէջ վերադարձեր էր տղան տուն . լուտանքներու անարգանքներու տեղատարափ մը մօրը հանդէպ , որ չ'էր կրնար այդ գիշեր իր ուղած դրամը վճարել իրեն , կինը , լալով , աղաչելով , պաղատելով ի դուր կը պնդէր թէ դրամը չ'էր առած և հետեւեալ օրը իրեն պիտի վճարէր ուղածը . զաւակը անդրդուելի կը մնար , հայհուցներու տեղատարափը կը սաստկանար :

— Զ'է , կուզեմ , հիմա կուզեմ , չէ նէ քեզի կը ծեծեն :

Կինը լռեց . տղան աւելի կատաղի խոյացաւ մօրը վրայ ու սպառնալիկ շարժում մը ըրաւ անոր զարնելու :

— Զ'ես մեղքնար ինծի , երուանդ , նայէ քեզի համար է քի ամէն օր ասանկ կը տատիւմ , եղունգներս կը փտտեցնեմ կոր չուրիւրուն մէջ , մեղք եմ , զաւակս :

— Մեղք , ինչ մեղք , քէֆիդ համար վաստկեր ես ինծի , հիմա ալ իմ քէֆս պիտի ընես :

Մայրը շանթահար մնաց այս խօսքին առջև . այս էր իր անչափ տարուան լռիկ ու չարատանջ աշխատութեանց վարձատրութիւնը . այս էր փոխարինութիւնը այն դիւցազնութեան ու սիրոյն զոր ցուցուցեր էր ընտանիքին պատիւը բարձր պահելու համար . ու զգաց տարաբաղդ կրնր թէ երջանկութեան շէնքը , զոր մինչև հիմա այս զաւակին սիրով բարձր պահեր էր , կը փլէր մէկ վայրկեանի մէջ , ու սկսաւ դառնապէս հոգեւին լալ , հարուածներուն անձնատուր զաւակին , և անոնց տակ մեռնելու ջանադիր , յուսահատ :

Լ. ՇԱԹՐԵԱՆ

ԾԱՌԱՅԱՆԵՐԸ

Պատահանիս պատգամին վրայ լայն , թաղարներու շարք մ'իրարու քով կենան , Ռոնց մեջին ծաղիկներու գոյնգոյն , Խուլբեր պարեն ծխածանի մը հանգոյն :

Առաւօտեան մեղմ զեփիւռեմ' քիչ առ քիչ , Հեռ բոյրերու ծխածաններ զգլխիչ , Ծաղիկներուն ծոցէն օսկաւ կուտան խոյս , Հեռութիւն մը կաթեցնելով մեջն հոգւոյս :

Ու մեծութեան պահերուս մեջ հոգեխռով , Մինջ տուայի իմ միտս դառն խոհերով , Կուգամ յայնժամ փոքրկն անոնց հրեւազին , Ըմբոխներու տեղով մ'բոյրերն հեռագին :

Բայց վախն ունիմ քե վաղը իսկ անվեհեր , Պիտի փրչե ձմեռան ցուրտ փամբեր , Ուր դալկահար հողիկներու պէս աւաղ , Պիտի խամրին , քափին շուտով մը նուաղ :

Միտս ալ քաղար մ'ե քիւրեղեայ դիւք սկան , Ոսկերուազ նկարներով զարդ սրուն , Ուր հմայեմ սեր-ծաղիկներ խօսկան , Կը փրքին հոն սիրոյ ջերմէն անդադրում :

Բայց հազիւ քե վայելու տեղն սիրավառ , Բոցալուռի հոգիիս խորն անյասակ , Պատահեմ ցուրտ խորն սկեռեմ դողահար , Խամրին իղձերս , յոյզերս , հեւեոս լսնջիս օսկ :

ՀՐ. Յ. ՄՈՐՃԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յրկին պատասխան մը չ'է որ կը գրեմ Պ. Ենովք Արմէնի՝ թիւ 38 « Բիւրակն »-ի մէջ գիտակից անիրաւութեանց և անգիտակից մէկ քանի դիտողութեանց դէմ :

Անցողակի կ'ըսեմ թէ գիտակից անիրաւութիւն մ'է, դպրոցականի զրպարտութիւն մը միայն, երբ Պ. Ենովք կը յայտարարէ թէ ես նախորդ պատասխանս « թերթերու դուռը պտտելէ ու մերժուելէ ետք » միայն յաղորդեմ եմ տալ « Հանրագիտակ »-ի մէջ : Իբրեւ աւելի քան հինգ տարիներու լուր համեստ աշխատակից մը Մասիսի և նախանձախնդիր անոր նկարագրին հաստատ միութեանը, այդ պատասխանս ՄԻԱՅՆ Մասիսի ներկայացուցած էի : Կ'երեւայ թէ Մասիս, առարկելով որ Պ. Ենովք ալ իր աշխատակիցը՝ հոյակապ աշխատակիցն է, պատրուակով մը մերժեց սոյն յօդուածս : Դարձեալ զրպարտութիւն մ'է ըսել թէ՝ ես ինքզինքիս « Եղիային փոխանորդելու դերը կը շնորհեմ » և իբր թէ կը կարծեմ եղևի որ « թերթ մը Եղիային թերին լրացնելու համար ինձ պէտք կ'ունենայ » : Միթէ ես ասանկ խօսք ըսած էի պատասխանիս մէջ : Աս ինչ առաձգական խաղեր են, և արդեն Պ. Ենովքի բոլոր ըսածները առաձգական բան մը ունին իրենց մէջ, մգլտած հայերէնով մը (արտառողք՝ ամտառող կը գրէ միշտ միշտ, ու ձերբադիւրծութիւն բառը « փ » ու կը կարծէ), յուսահատելիօրէն կրկնաշատ երկարաբանութեամբ մը որ դարձահոտ պղտոր ջուրի պէս դանդաղ ծանր ընթացքներ կ'առնէ, աշխարհիկ քննախնդիր ճատը կնոջ (ճատը կին մը միայն կ'ըսէ. « Կռողին ականջը » տե՛ս Բիւրակն, թիւ 38, էջ 747, տող 12րդ) բոլոր ծեքծեքուններով ու մանկամիտ չարաճճիւթեամբ զոր վայելչապէս քալիքներ ու արդուզարդամոլ նախանձոտ պղրուհիներն ունին իրարու հանդէպ : — Իսկ կամակոր չարամտութիւն է ըսել թէ « յօդուածիս հատուածներուն առջինն մեղմեմ » իսկ չէ՛ր կրցած լուսաբանել : Կը վախնայի որ պատասխանս նոյն իսկ երկար էր՝ ա՛յնքան տարրական գրեթէ

մանկավայել լուսաբանութեան մը համար . ամէն ատեն իրե՛ն և իրե՛ն պէս յամառ թանձրամիտներու պատասխանելու ո՛չ մէկ պարտք ունիմ :

Պ. Ենովքի գլուխ-գործոց չարամտութիւնը սա՛ է թէ իմ պատասխանիս մէջ պատշաճաբար յիշուած անուններ իրարու քով իե՛րե՛ր և, ցոյց տալու համար թէ ո՛րքան անկապ են անոնք : Ասոր մէջ չէ՛ք տեսնուի չարամիտի գերագոյն հնարքը, խորամանկ կառուցներն ու քալիքները անունապէս նախանձեցնող . ո՛վ կը պահանջէ որ աշխարհի ամէնէն ընտիր բանաստեղծութեան մը մէջ — Համառութիւնի լիճք կամ Կէօթէի « բոլոր կատարները հանդարտ են » ու « Զկնորսը » օրինակի համար — յիշուած յատուկ անունները կամ պարզ գոյականները իրարու քով չարեւով անշատաբար, կարենան անոնք ամբողջական գաղափար մը, պատմութիւն մը ցուցնել :

« Բիւրակն »-ի մէջ ժամանակին գրածներուս մէջ արժանիք մը կը գտնէ, ինչ խորամանկութիւն՝ ցոյց տալու համար իր խմբագրի կարծեցեալ հովանաւորութեան բոլոր ընտրագէտ իմաստութիւնը : Մինչդեռ հասարակ ընթերցող մ'ալ պիտի ըսէր թէ ա՛յդ գրածներս ո՛րքան կ'աղօտանան « Մասիս »-ի մէջ վաղամու կրտսեր եղբորս վրայ գրած բանաստեղծութեանցս, Մուսիս Ռուբիկայի վրայ փորձած ուսումնասիրութեանս և ուրիշ մէկ քանի գրութիւններու քով ուրոնցմէ կը յիշեմ հիմա « Աշնանային վերջալոյսի » կարճ քերթուածս, (այժմու « Հանրագիտակ »-ի մէջ) : Կը տեսնէք թէ հո՛ն ուր Պ. Ենովք զիս փոքր ինչ ներբողել կը ձգտի, հոն իր հոյակապ անձին մե՛ծ ընտրագիտութիւնը կ'ուզէ յառաջ նետել, այսինքն պարզել իր սրտին ամայութիւնը, ցամաքութիւնը :

Միակ ճշմարիտ ներբողը ինծի համար այն դիպուածն է որով Պ. Ենովք այս անգամ նորէն յիշե՛ր է « Ժայռի Զուրը » յօդուածիս ամէնէն ընտիր հատուածները, անշատ անշատ : Զազիր գարշահոտ փողոցի մը եզրը նետուած դժբաղդ շուշաններ են այդ անշատ յիշուած հատուածները. անցորդը (ընթերցողը) զարմայած պիշ պիշ պիտի

նայի անոնց ու ըսէ . « Դո՞ւ ի՞նչ գործ ունիք, գացէ՛ք այն պարտէզն ուրիշ եկաք » : — Ա՛հէ՛ն բան ցոյց կուտայ թէ անհունապէս հակոտնեայ մըն եմ ես Պ. Ենուլքի : — Անշուշտ մէկը որ, յայն պագչոս վէպերէ ու թիւթէ ընթերցումներէ, չէ՛ հետամուտ եղած ո՛չ իմաստասիրութեան ընդհանուր պատմութեան, ո՛չ բնական գիտութեանց ու բոլոր շինիչ գոտի տեղեկութիւններուն ուրոնք քաղաքները կ'առաջնորդեն ու անոնց հաստալոյ գետին (terrain) մը կուտան, այդպիսի աշխարհիկ մէկը միայն իր պատկերը պիտի ուզէ տեսնել ամէն անձի մէջ, ծո՛յլ հեշտին եսասիրութեամբ մը՝ պիտի ուզէ որ տեսնենք միայն իր զիւզ մը տեսած անգը ու անկէ անդին տարածուող միջոյր քարացած մատախուղի մը պէս յանձնենք ծուլութեան :

Ի՞ր կարծեցեալ ուսումնասիրութեան զըլ-խուրդ առանցքը կը կազմէ սա անդուլթ խօլ զրպարտութիւնը թէ ես, հակառակ իմ բոլոր « ինքնաուպութեանս », ոչ միայն Եղիային փարած կը մնամ սնկաշկանդ, այլ միշտ, « բերանացի թէ գրաւոր » շարունակ անդուլթ հմայքով մը զինքը կը փառաբանեմ, « հաւատարմօրէն » կը նմանցնեմ ու կը կեղծեմ » զինքը, համոզուած թէ « թէ ֆիզիքայէս եւ թէ հոգեկանապէս » իրեն կը նմանիմ : Ձիս անձնապէս ճանչցողներ (որպէս Պէրպէրեան եւ իր ամէնէն տաղանդաւոր սանը Տ. Զրաքեան, եւ ուրիշ շատեր) ֆիզիքայէս փոքր ինչ նմանցուցած են զիս Հունկին հեղինակին : Ի՞մ դաստիարակս անմոռանալին Պէրպէրեան, փոքր տարիքէս (կրտսեր դասարանէն) կը հաստատէր աւտիկա, աւելցնելով նաեւ « զգացումներու նոյնութիւն » մը (իւր բաւերով) : Տէմիրճիպաշեան այն ատեն իմ մէկ չտեսած ու չկարդացած ազգականս (հօրս կողմէ) էր միայն : Անկէ մինչեւ այսօր երբ ալ կարդացած եմ զինքը ու երկու անգամ միայն տեսակցած իրեն հետ, նշանակելի բան մը չէ դարձած զիս իր մտքին խոյանքներուն հնազանդեցնող : Իբրեւ զգացումի մարդ միայն կը սիրեմ զինքը : Ի՞ր մե՛ծ ներողամտութիւնները կը պատմեն աւտիկա : Բայց իբրեւ իմաստասէր, չե՛մ կրնար սիրել զինքը, վասն զի իմաստասիրող մը չէ ան իմ աչքիս տակ : Միամիտներ կը կարծեն թէ Եղիա կ'իմաստասիրէ հոն ուր միայն արուեստագէտը շա՛տ մասնաւոր զգայութիւններ կը նկարէ կը վերլուծէ : Ներվանան իմաստասիրութիւն մը չէ՛, անիկա ոլորտիկ մայրամասնութիւն մ'է ալ միայն մարդկային իմացականութեան մէջ : Մէնիքոֆի զիտած « մահուան բնազդը », Տօքթ. Յոսէֆի նկարագրած ծերունին կը ջնջեն այդ

« մանրամասնութիւնն » ալ, այս երկու մեծ մարդասէրները մեզի կը պատմեն հոգիին խաղաղութիւնը — la paix en soi — բընական մահուան մը հասնելու ամէնէն տառաքինի շաւղիները, այն հեյտալի կէտը որ, կատարելապէս բոլոր համեմատութիւններով ներդաշնակ (այսինքն առաքինի) կեանքի մը չնորհիւ, գիտակցօրէն կը տիրանայ մարդ հոգիին խաղաղութեան, անգամ մըն ալ հաստատելով ամէն գործարանաւորութեան խոր թաքուն արմատական անմահ լատատնութիւնը անմահ ներդաշնակութիւնը :

Այս տողերը եւ Անտօնեանի « Ծաղիկ » ին մէջ գրած յօդուածն (ծերութիւնը եւ մահուան բնազդը) կը հաստատեն թէ ես ո՛րքան հեռու եմ Եղիային մտածումները վերակույնէ, թէ ես որքան կը սիրեմ մանաւանդ շա՛տ մասնաւոր զգացումի մը՝ շա՛տ անձնական զգայութեան մը մէջ, ամենէն ընդհանուր ամէնէն տիեզերապէս բարոյական գաղափարները տեսնել ու ապրեցնել :

Ի՞մ առաջին եւ վերջին բառս է ներդաշնակութիւնը իւր ամէնէն լայն իմաստով, ներդաշնակութիւնը Անէութեան առջեւ, Անոր գիտակցութեան իսկ մէջ :

ԵՂԻԱՅԻ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱՐ

ԱՌԱՆՅ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵԼՈՒ

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԳՈՂՈՒՄԸՐԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի, ճերմակեղենի, ֆանթեզիի, աղամանդի, ժամացոյցներու, շորաբաններու եւ ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ԵՒ ԳԻՏԵՔ ԼՐԵՉ ՊԱՅՄԱՆԱԿ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքնուդ 20% ը կանխիկ, մնացեալը շաբաթական 5% դրժ վճարելով : Կանխիկ գնողին 5% զեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծանուցանել իւր բազմաթիւ յաճախորդներուս թէ՛ մօտ ատենէն պիտի աւելցնէ տեսակը իւր ապրանքներուն, զորս պիտի հրատարակինք յաջորդիւ :

ՆՈՐԵԼՈՒԿ ԲԱՌԱՐԱՆ

Մեր սրամիտ աշխատակից՝ Ե. Թօլայեանի նորելուկ բառարանը որ, նախապէս «Մանգուլի»-ի մէջ սկսած էր, անոր մէկ քանի լրացուցիչները մեզ դրկած ըլլալով, աւելորդ չենք սեպեր անոր հրատարակութիւնը իբր սրամիտ պատկերներ :

ԹԵՊԻՒԿԻՆԻՆ համեմատեմ

«Զգացած յուզումն . . . ծունկերը կտրեցան»,

(Սխալ, սո՛ւտ : Եթէ ասիկա իրաւ ըլլար, ա՛յլ քնաւ հարկ չէր մնար հիւանդ ծունկ մը կտրելու համար ահագին վիրաբուժական գործողութիւններու դիմելու և Տօքո. Զարդարեանին գրպանը լեցնելու : Ընտանեկան պզտիկ յուզում մը կը զգայինք և լինեցա՛ւ . . . «ծունկերնիս կը կտրուէր» : Արդէն, եթէ մեր ամէն զգացած յուզումին համար ծունկերնիս կտրուէր, այն ատեն դիմացնիս ելողը . . . cul de jatte պիտի ըլլար) :

«Տկար եմ, գլուխս կը դառնայ կոր» :

(Ամէնքս ալ այս բացատրութիւնը կը գործածենք առանց մեր ըսածին անգամ մը իսկ անդրադառնալու : Շիտակ է որ Բիւշանի պարտէզին փայտէ ձիերը շարունակ կը դառնան, բայց գլուխ մը՝ որ մարմնին վրայ կը դառնայ . . . ցուցադրուելիք շահեկան phénomène մը պիտի ըլլար այս) :

«Քրտինքներու մեջ կը լողամ կոր . . .»

(Աւելորդ չէ՞ք գտնել որ մարդիկ ամէն ամառ գիւղերը երթան՝ ծովուն մէջ լողալու համար, երբ ասդին ա՛յնչափ դիւրին ու աժան կարելիութիւնը կայ . . . «քրտինքներու մէջ լողալու» : Իւրօքէ-Գալտըրմի զառիվերէն երկու անգամ կ'ելլէք կ'իջնէք, և ահա՛ ձեզի ինայողական լողանք մը) :

«Մարդուն հոգին ելաւ» :

(Մեր գիտածը՝ երբ մէկու մը հոգին ելլէր, կատարելապէս ճողած կ'ըլլար ան : Բայց, հիմա nous avons changé tous cela ! : Եթէ երկու ժամ վրայէ վրայ աչ-

խտինք, կասկած չկայ որ ձեր «հոգին կ'ելլէ» . . . Ժամ մը հանգիստ կ'առնէք և ձեր հոգին տեղը կը վերադառնայ) :

«Հոգին բերանը բերիր» :

(Կ'երեւայ թէ մեր հոգին մեր մարմնին մէջ ատեն ատեն պզտիկ ճամբորդութիւններ ընելով ժամանակ կ'անցընէ : Մինչև մեր բերանը կուգայ, և պահ մը միտքէն կ'անցընէ անկէ դուրս ելլել, բայց, յետոյ, ճայմիջ ըլլալով, ետ կը դառնայ : Գիտէի՞ք թէ ձեր հոգին քիչ մը ժամանակ սպաննելու համար ձեր մէջը ասանկ շրջագայութիւններ կ'ընէր) :

«Աղջկան յոյսը կտրեցաւ» :

(Բացատրութեան եղանակ մը որ խորհրդածել կուտայ թէ աղջիկներու յոյսը՝ մետաքսի թէ՛լ է, դերձան, չուան, թէ . . . Տէրքոզի ջուր) :

«Գլուխս քարէ քար գարկի» :

(Այո՛, պարոններ, մարդիկ կան որ գործ մը գտնելու հազար . . . «գլուխնին քարէ քար կը գարնեն», և ո՛չ գործ մը կը գտնեն և ո՛չ ալ . . . գլուխնին բան մը կ'ըլլայ, թէև իրենց գլուխը . . . երկաթէ ալ է) :

«Պատուելին իր քարոզին մէջ վերացաւ» :

(Խօսելու ձև մը, որ սակայն մարդուս միտքը շատ մը խնդալիք բաներ կը բերէ : Ասկէ մօտաւորապէս վեց հազար տարի առաջ, խել մը մարդիկ քանի մը հազար տարի ապրելէ ետք՝ ո՞ղջ ո՞ղջ կը վերանային. (ծօ՛, քալէ՛ գանգալը, Թա՛ղեո՛ս) : Անոնցմէ ետք, այսօր, Պ. Մանդու-Տիւմոն իր օգտաւարիկովը կը վերանայ : Պատուելին որ սակայն օգտաւարիկ չ'ունի և այլ միմիայն . . . ճաթած ձայն մը, կը գոհանայ . . . իր քարոզին մէջ վերանալով) :

«Աքքա ելլայ»

Ահա շառլաթան անեծք մը, որ շատ անգամ կը կրկնուի կանացի շրջանակներու մէջ, մանաւանդ մայրերը կը գործածեն այս անեծքը իրենց զաւակացի կամ սիրելիներուն հանդէպ, և . . . «աչքս ելլայ» ըսելէ կէս ժամ վերջ, կարելի է սիրմե ալ կը քաշեն հայելին դէմ :

ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ

(Շարունակութիւն)

Անցան ամբողջ երկու տարի, մտածու-
մի և յոյզերու տարիներ: Արուեստի լու-
սեղինիկ ճառագայթներ հոգիիս մէջէն ան-
ցան, նշուազեղ ցոլքեր յուզումնալից լան-
ջիս տակէն սահեցան: Օրերուն անխուս-
փելի կուտակումին հետ՝ համոզումս աւելի՝
անառիկ և տենջանքս աւելի՝ զօրաւոր կը
դառնային հետզհետէ:

Միակ զբօսանքս թատրոն երթալն էր,
թատրոնի վերաբերուած գրութիւնները կը
կազմէին գերագոյն հաճոյքս: Այդ սիրա-
սուն զբաղումներէս դուրս կեանք չը կար
լինի համար, ապրիլուս անդոյդ պայմանը
այդ էր միայն:

×

Օր մը կ'իմանամ թէ Պերճուհին հիւանդ
է: Այս տխուր լուրը փոքրիկ մտատանջու-
թիւն մը կ'առթէ ինծի, թէ և առերեւո-
թապէս անփոյթ ու անտարբեր կ'երեւամ
լինծի իմացունողին քով: Երկու տարի կար
որ զինքը տեսած չէի, կը փափաքէի եր-
թալ ու մօտէն գիտակ ըլլալ իր առողջա-
կան վիճակին: սակայն չը համարձակեցայ՝
վասն զի լաւ գիտէի թէ խիստ յանդիմա-
նութիւն մը և սառնային ընդունելութիւն
մը ինծի կ'ապասէին: Եւ չը գացի: Դիչերը
մէկ քանի անգամ տունին առջեւէն անցայ
ու դարձայ և միայն փողոցին ծայրէն, հե-
ռուէն յանդգնեցայ երկչոտ ակնարկ մը սե-
ւեռել անոր տունին: Շէնքը բոլորովին
մոռթ էր և լոռիեան մէջ խորապէս թաղ-
ուած: Օ՛հ, խորհեցայ, արդեօք յաւէտ
այսպէս լուռ ու մոռթ պիտի մնայ այս բը-
նակութիւնը՝ ուր սպիտակ հոգի մը, հրեշ-
տակային էութիւն մը կ'ապրի:

Մարդ մի՛շտ տխուր ապագայի մը կան-
խաղագացումը կ'ունենայ՝ որ վաղ կամ անա-
դան կը մարմնանայ: Դրախտային կեանքի
մը երազանքը ունեցի՛ր՝ և ահա՛ մօտաւո-
րապէս պատրանքը պիտի հասնի ու հեզնոտ
քմծիծաղով պիտի քաշէ աչերուդ դէմէն:

ոսկեհոռ վարագոյրը՝ որուն ետին պիտի
դնես խաւարային կեանքի մը աղջամղ-
ջային դառնութիւնը: Այս մի՛շտ այսպէս է.
բիւրերանդ ծաղիկներու դէզի մը՝ տակ
տրտմաբոյր դագաղ մը կայ, ահնահաճոյ
կանանդութիւններու ներքե ցուրտ հող մը
կը քնանայ, աշամանդի մը խորը՝ անուխի
սե պատառ մը կը պարփակուի, ոսկեգոյն
թիթեռի մը շողարձակ թեւերուն մէջտեղ
զազիր որդ մըն է որ կ'ապրի:

Քանի մը օրէն նամակ մը կ'ընդունիմ
անկէ: Պահարանին վրայ դուղդուղուն ձեռ-
քի մը զիւր կը նշմարեմ: Այդ նամակը եօթ
տարիէ ի վեր կը պահեմ խնամով ու պաշ-
տամունքով, և հիմա երբ ներկայ տողերը
կը գրեմ՝ ան սեղանիս վրայ իր բովանդակ
մերկութիւնը փւած է ու տարածած աչե-
րուս դէմ, շուայտ ու մեղկ կնիկի մը հո-
ւանի ու լկտի ընկողմանումին պէս:

Կ'օրինակեմ այս նամակը՝ առանց ստո-
րակէտ մը իսկ փոխելու անկէ:

1898 Ապրիլ 21

Սիրելի Աշո՛տ,

Ամիս մըն է որ հիւանդ եմ և անկողի-
նիս մէջ պառկած: Դիտութեան մարդերը
կ'ըսեն թէ՝ ցուրտառութենէ յառաջ եկած
հիւանդութիւն մըն է որ կ'անցնի, կը սը-
խալին անոնք սակայն, ես գիտեմ իմ հի-
ւանդութիւնս, որ պիտի անցնի՝ սակայն
իմ կեանքիս հետ: Ապրիլի մէջ եմք, ապ-
րիլի՞ն օրեր . . . ինչո՞ւ առողջ չըլլայի հի-
մա և կարենայի վայելել քեզի ու թնու-
թիւնը, սիրելիս: Պատուհանէս կը տեսնեմ,
հեռուն, դաշտերը՝ ուր ծաղիկներու և կա-
նանչներու վրայ ինծի հասակակից և ինձի
փոքրահասակ աղջիկներ կը վազէգին, կը
խաղան, կը պարեն, ծաղիկ կը քաղեն,
կ'զբօսնուն վերջապէս: Կը խանդաղափմ,
ներքին քաղցրանուշ մղում մը կ'ունենամ
անկողինէս իջնելով դաշտ վազելու . . .
սակայն փորձս կը հաստատէ թէ անկարող
եմ ու անոյժ այդ կուսական արդարացի
տենջանքս իրականացնելու, և կը մնամ վե-
րստին անկողինիս վրայ յուսալքէպ և ոյ-
ժաթափ . . . Կը սիրեմ հաւատալ թէ պի-
տի կարենամ օր մը լեռներուն ու դաշտե-
րուն գեղեցկութիւնը վայելել:

Հիմա դերագոյն իղձս քեզի իմ մօտ տեսնելու է : Ինչո՞ւն չեկար զիս տեսնելու, երկու տարի եղաւ, կ'զգա՞ս Աշոտ, երկու տարի, Աստուած իմ : Դուն որ ժամանակ մը — ո՞հ, քաղցրագոյն եւ երանելի օրեր — առանց զիս տեսնելու հանգիստ չէիր ըլլար, այսօր երկու տարի է որ փողոցէն իսկ չես անցնիր, դուն շատ անգութ ես, Աշոտս, շատ անզգայ ես :

Չեմ կրնար աւելի երկար դրել, արդէն իսկ տկար եմ ու հաս ձեռքերս ալ կը դողդողան : Եկո՛ւր, սիրելիս, միայն քեզի, քեզի՛ տեսնել կ'ուզեմ : Խօսելու շատ բաներ ունիմ : Պիտի գա՞ս, անանկ չ'է, Աշոտս, կարօտդ հոգիէս, մարմինէս կը զեղու :

Պերճունի

Ակնթարթի մը մէջ՝ մոռցուած սէրի մը, անտեսուած հաւատքի մը անհղ ու կատաղի զգացումները կը վերազարթնուն էութեանս թագուն ու միջին խորերուն մէջ, ու սիրագիրը՝ սլինդ գրկած մասներուն մէջ՝ պաշտամունքի եւ ակնածանքի անհունութիւնով մը շուրթներուն կը մօտեցնեմ . . . կը համբուրեմ զայն, կը համբուրեմ դուրգուրանքով եւ արցունքներովս կ'ողողեմ այդ պաշտելի հիւանդին ձեռագիրը . . . :

Յաջորդ օրը տատամտութեամբ քայլերով դէպի անոր տունը կ'ուղղուիմ :

Հաճելի զովութիւն մը կը սաւառնի միջուորտին մէջ եւ խոհերու անվերջ տողանցում մը կը չարչրկէ մտայնող գա՛նկս :

(Յաջորդ թիւով)

ԱՆՈՏ ՄԱՍՔԵԱՆՅ

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուրախութեամբ սրտի կը շնորհաւորեմ Պարսից դեսպանատան բժիշկ Տօք. Սամուէլ Էֆենտի Լապինեանը, իսկ սիսդոսին բարձրանալուն առթիւ :

Պարսից Վեհափառ Շահը գնահատելով Տօք. Սամուէլ իսկի բաւոյն ծառայութիւններն, իրեն կը պարգեւէ սոյն սիսդոսը, որուն արժանի է արգարել :

Մեր ջերմագին մաղթանքները իր եւ իր կիսեր եղբոր Թեոդիկ Էֆենտիի :

ՅԻՐ ՈՒ ՑԱՆ ԽՕՍՔԵՐ

ԳՈՐԾԱԿԱԼ — Լրագրի վաճառատան պատճենայ, որուն պատասխանատուն ինքն է, եթէ ապագիկի դուքսներ ի գործ դնէ եւ չի կարենայ միօր գանձումները ժամանակին հասցնել իւր վաճառատներին : (Իրաւ, անանկ է, չօգ շէյ. Ծ. Խ.) :

ՅՐՈՒԻՉ — Լրագրի մուկետիկ, որ ելեւեղ խաչերով անոր անունը կը պառայ կը կանչէ մինչեւ իրկուն երկու վայրկեանը անգամ մը, ի խնդիր օրապահիկին :

ՓՈՐՁ — Խմբագրին տղաբերի սկզբնաւորութեան երկունքը, որմէ քիչ ժամանակ ետք կը ծնի բերքը :

Ծ. Խ. — Յօդուածին բուրակ (թեմեմար) նէ, որ 7 1/2 սանթիմ օձիքներու պէս կը վայլեցնէ Յէր — ցան Խոտերը, ու քէ չ'են դեղնիր եւ քէ արուեստագէտի անհասարմանքուն նուրբ հետքեր՝ անցմար չ'են մնար բաւական ասեմ, քիչեք չի գործէ անոր փայլը վայրկեանի մը մէջ կորսնցնելու, փրկացնելու եւ փուշի կտորի վերածելու զայն :

ՊԵՐԵՋՄԱՆ — Բնակարան յալիսեմեական կեանքը ապրելու :

ՄԵՌԵԼԱԹԱՂ — Անդաւաճարի դոնապանը :

ԽՈՒՆԿ — Հոգեհանգիստի անուանոցունքները :

ՄԱՀԱՐՁԱՆ — Անցիմը յիշատակ մեռելներու առիւտին մէջ, ուրկէ մեռն պատկառանքով ու համակրայից նայուածով կը դիտենք հոգ հանգչող անմահ եակը, եթէ բարեգործ ու առաքինի կեանքով համայնից համբաւին արժանացած է, աղետացած ձերմոսու եղած է, կամ մարդկութեան բարոյախօսը :

ԳՈՐՈՎ — Սրտին անկեղծ փափաքը, որ կասարեալ մարդերու վրայ կը տեսնուի : Կան կեղծ գորովներ, որ մարդը մահու չափ կը տեսնեն :

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — Գրագէտին բարոյական գաւալը, որ անոր մահէն վերջ ալ կ'ապրի :

Ա. ԻՍՊԵՋԱՐԵԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

288 ԺԱՄՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուր Ե. Թօլստոյան կը համոզուի թէ լրագրութեան մէջ օտարախօսութիւն մը օգտակար չի կրնար ըլլալ, ու կը փառուի :

1904 Դեկտեմբերի 14ին էր՝ այս օրուան պէս կը յիշեմ, երբ կէս օրին խմբագրատունն այցելութեանս, ցրուիչս իմացուց թէ՝ Մեծանուն երգիծաբանը Պր. Ե. Թօլստոյան, քրտինքը ճակտին, երկու անգամ եկած էր զիս գտնելու :

Անպատճառ դրամի պէտքը զգալի է եղէր նորէն ըսի ինքնիրէնս, համոզուած ըլլալով թէ, երբ վաճառականները նեղը մընան, պանգային կը գիւնեն, իսկ խմբագրութեանը կամ հրատարակագիրները՝ թերթերուն տնօրէններուն, սակայն տարբերութիւնը որ կայ պանքայի մը և թերթի մը տնօրէնին ինք գրպաններուն միջև էլ թիկնի հրաշակերտն ալ կ'անցնի և ամպերուն ալ կը խառնուի :

Ինչ և է : Հաղիւ գաւառէն եկած նամակներու ծրարը կը բանայի անձկանօք և որոնց մէջէն « Սրտի եղեր » « Տուայտանք » « Լուսինը » « Մեր կրթական հարցը » վերնագիրները թափուր ստամոքսիս ճճիները ոտք կը հանէին, յանկարծ սենեկէս ներս մտաւ նոյն ինքն Ե. Թօլստոյան, անձրեւէն ու ցուրտէն . . . դեղնած ու թռչնած :

— Օ՛հօ . . . ըսի ձեռք կարկտուելով երիտասարդ բարեկամիս, որ փոխանակ ձեռքը երկնցնելու աչքերը խոշոր խոշոր բացած մատներուս մէջ կը նայէր . . . չեմ գիտեր ինչո՛ւ . . .

— Աս ասանկ չըլլար Փափաղեան, ըսաւ գտակը գրասեղանին վրայ դնելով, ախպար դուն չե՞ս ուղեր փարայ վաստիկի . . .

— Ինչո՞ւ չէ, ինչ ըսել կուզես, ըսի ժպտելով . . .

— Գիտես, որ գրած յօդուածներս կը հաւնուին կոր, աւելի աղէկն ալ կրնամ գրել . . .

— Կը հաւատամ, ըսի,

— Չէ՛, մի քաշքէր, այսօր լայնիւր սօյէն երգիծաբան մըն եմ . . .

— Տարակոյս չ'ունիմ . . . աւելցուցի . . .

— Կատակը մէկդի, գրեմ նէ կը գրեմ . . .

— Վստահ եմ ատոր, կրկնեցի . . .

— Հիմա ինքզինքս գովել չըլլա՛յ, մերամ ընեմ նէ տակէն կելլամ . . .

— Անտարակոյս, և ինչո՞ւ չելլաս, պատասխանեցի,

— Հիմա բան մը կը մտածեմ կոր, կամ թէ մտածած էի . . . և կամ մտածեցի . . .

— Je compte sur vous . . . յարեցի . . .

— Հիմա դուն շաբաթական քանի հատ կը ծախես ձեռքէ այս թերթէն . . .

— Շատ լաւ, վերջը . . .

— Չէ ըսելիքս կարեւոր է, անոր համար հաշիւներու ճշգրտութիւն կը պահանջեմ . . .

— Արդեօք կրնամ ձեր այս հարցումներուն բուն և թագունն նպատակը հասկնալ, հարցուցի սիրելի բարեկամիս և Մեծ երգիծաբանին Պր. Ե. Թօլստոյանի :

— Եթէ կարելի է պիտի առաջարկէի ընկեր ըլլալ գործիդ . . .

— Ա՛ . . . չըսե՞ս սիրելիս . . . ամենայն սիրով ի՞նչու չէ . . . լաւ, օն ուրեմն, դժբաժանագլուխնի՛դ . . .

— Շաբաթական ութը երես ձեռագիր . . .

— Համմէ՞ . . .

Այս համմէն անանկ մը պոռալով արտասանեցի որ, սիրելի բարեկամս Պր. Ե. Թօլստոյան ինքզինքը կռնակի վրայ գետնի տախտակամածին վրայ գտաւ :

— Վախս ինչ էր . . . Փափաղեան, երբ բարձր ձայնով խօսելու միտք ունենաս, երբ ու վայրկեան առաջուց ըսէ ինձի սիրելիս, ըսաւ խեղճ տղան, կրկին գրաւելով իր տապալած աթոռը :

— Ինձի նայէ՛ տօքախ, ասանկ ուշ գաս նէ, գործերնիս առաջ չերթար, ես նայէ կանուխ եկայ որ, կարելի է բօսթածին մանուաբօսք մը կը բերէ և կամ ուրբօմանտի նամակ մը, և ստորագրող չլլար . . .

— Սիրելիս, քեզի բռնմ որ ժամը երեկոյեան իննին ալ գաս, նորէն բօսթածին երեսը չես կրնար տեսնալ, կը ցաւիմ որ քունդ հաւամ ես ըրեր . . .

— Ինձի նայէ Փափազեան, քառորդ մըն ալ տուր տէ պիւֆթէք մը ուտեմ, չարթու գլուխ հաշիւէն վար կ'ինջնանք . . .

— Նամակ, դրամ, բաժնեգին եւլն. ե. կա՛ւ այս առտու . . .

— Ձգ . . .

— Շատ լաւ առ քառորդ մըն ալ, ըսելով իր հաշիւէն (°) հինգնոց մը եւս տուի: Օրը ցերեկ եղաւ և դեռ բաժանորդներէն դրամի երես տեսնող չիկայ . . .

Երեկոյին երբ կը պատրաստուէինք երթալ, սիրելի բարեկամս Ե. Թօլայեան խնայելի ձեւերով ինձի մօտեցաւ . . .

— Յանուն մեր գրական օւթախոթեան, հաճեցէք մէճիս մը տալ սնտուկէն, որուն շատ պէտք բռնիմ, այս գիշեր շատ պէտք ունիմ տէ . . . չարթու գլուխ մեր հաշիւէն վար կ'ինջնաք . . .

Ամէն անգամ որ հաշիւէն վար իջնալու խօսքը կըլլար, իմ դրպանս ալ նոյն համեմատութեամբ վարերը կ'ինջնար, և սակայն վճարեցի:

— Ա՛խ . . . սիրելիս շատ ազնիւ էք, չարաչար ազնիւ էք . . . ո՛հ . . . անհունս յառաջ պիտի տանիմ գործը, պիտի գրեմ, գանկս ճաթեցնելու չափ պիտի գրեմ, որպէս զի մեր քիռաժը աւելնայ . . ., ըսելով մէճիսը գրպանին խորը իջեցուց, անշուշտ չարթու գլուխ հաշիւէն ալ վար իջեցնելու պայմանաւ:

Մինչ այս մինչ այն օրը հինգչարթիին եկաւ:

— Թօլայեան, ըսի լուրջ դիմօք, թուղթ առնել պէտք է . . .

— Այո՛, պէտք է թուղթ առնուի . . . ըսաւ աչքերը բանալով:

— Թուղթ առնելու համար դրամ պէտք է . . .

— Այո՛, պէտք է դրամ թուղթ գնելու համար, կրկնեց առանց խնդալու . . .

— Լաւ, յանուն մեր գրական օւթախոթեան, պիտի խնդրէի որ թուղթ առնելու համար հարկ եղած դրամը . . .

— Այո՛, սիրելիս, անշուշտ չաթիւ զըլուի վար իջնալու պայմանաւ . . .

Եւ ըստ սովորականին պէտք եղած գումարը առաւ, որպէս զի թերթին պէտք եղած թուղթը առնուի:

Եւ թուղթը առնուեցաւ:

Նոյն օրը, զարմանալի զուգարիպու թեամբ մը քանխաղիս նամակ մը ստացանք, նամակ մը որ իմ սիրելի բարեկամիս և Մեծանուն երգիծաբանին աչքերը եօղուռտի (էօէէ էօէէ'օ) ջանախի պէս բանալ տուաւ:

— Ձգէ սիրելիս ես կստորագրեմ, ըսի, նոյն պահուն երբ մատրտ մը ձեռքը բօսթածին երեսը պագնելու աստիճան շուարած նստած տեղը կը ցատկուտէր:

Նամակը բանալուն ձեւը կարծէր Ֆօթօկոաֆիլի ընել շիտակը և . . . առանց բաւ մը արտասանելու ինձի երկնցուց, նամակ մը որուն մէջէն դրոշմաթուղթ կամ չէք կ'երագէր . . .

Նամակին պարունակութիւնը:

« Երկու անգամ է կը գրենք ձեզ, որպէս զի դադրեցնէք թերթը, բայց դուք « առանց կարեւորութիւն տալու կը շարունակէք զրկել: Այս անգամ ուրբօմանտէ « կը զրկենք մեր խնդրանքը, ազաչելով որ « դադրեցնէք առաքումը թերթերուն »:

Մնամ ձերդ յարգանօք

■ ■ ■

Թօլայեան, սիրելի բարեկամիս դէմքը տեսնելու արժանի էր, Հինգ օրուան մէջ մէկ ուրբօմանտի նամակ, ան ալ դադարման խնդրագիր . . .

— Անցած ըլլայ, սիրելագոյն բարեկամս, ըսի իրեն, սիրտդ ամուր բռնէ, ասանկ նամակներ կուգան, հոգդ մի ընէր, նայէ՛, գոյնդ մոխիր դարձաւ . . .

Ու առանց բաւ մը արտասանելու, ելաւ ոտքի ու սկսաւ սենեկը չափչիլել, ձեռքերը գրպանը ու մտածկոտ:

Այդ իրիկունն ալ քառորդ մը տուինք

գրական օւթախուժեալն անտուկէն, և շաբթու զլուխ վար իջնալիք հաշիւը հառաւ Յօն:

Հետեւեալ օրը ուրբաթ, Թօլայեան քիչ մը ուշ եկաւ սենեակ, երբ մեր ցրուիչը բօսթայի համար դրոշմաթուղթի ստակ կը պահանջեր:

— Երկուքս ալ հիմա իրարու երես սկըսանք նայիլ, և Թօլայեան տեղի տուաւ աչքերը վար առնելով, մինչ ես գրամը կը վճարէի ցրուիչին:

Լաւ չեմ յիշեր, բայց վստահաբար կրօնամբ ըսել լիէ՝ այդ իրիկունն ալ քառորդ մը փոխ տուաւ ինէ, միշտ չարթու գլուխ վար իջնալիք պայմանաւ:

Օրը շաբաթ . . .

Թօլայեան առտուն կանուխ, դեռ փողոցի ուկիւնքներէն չի մարած, տաանոց տօլմիշ մը նստելով խմբագրատուն կը հասնի:

Թերթերը ցրուած են, բօսթան չինուած, և կը մնայ շաբթուան օւթախուժեալն շահր բաժնի մեր մէջը:

Երբ սենեակէն ներս կը մտնամ, սիրելի բարեկամս Ե. Թօլայեան, ոտքի կելլայ և մեծարանօք կը բարեւէ զիս, ու կանցնի կը նստի դրասեղանին գլուխը հաշուեկշիւը պատրաստելու համար:

— Դրէ նայինք, գերազնուագոյն բարեկամս և Մեծանուն երգիծաբան Պր. Ե. Թօլայեան, գրէ, ես ըսեմ դուն գրէ:

— Ճանրմ, ես քու վրադ վստահութիւն ունիմ, կըսէ կեղծ քօմիլիման մը շռայլելով, ինչ է նէ, իշտէ հաշիւը ըրէ լինցուր, իմ առած 40 դրուշս ալ վար իջիր, մնացածը . . .

Եւ առաջին անգամը ըլլալով կը տեսնամ Թօլայեան սիրելի բարեկամս որ մոխրի գոյն մը կառնէ:

Մասիք . . . Թիւին համար 337,50

Հատոյթ 270

67,50

— Եթէ ձանձրութիւն չըլլար, հաճեցէք յիշել ձեր դպրոցական կեանքը և բաժնի 67,50ը երկուքի, որպէս զի շաբթու գլուխ հաշիւնի կարգադրենք . . .

Ե. Թօլայեան, Մեծանուն երգիծաբանը, թերեւս կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով մահման քրտինքները մտաւ, ու,

— Հարկ ը . . . չըկայ . . . ը . . . ը . . . ը . . . շատ լաւ . . . ը . . . ը . . . ը . . . ինչո՞ւ չէ . . . ը . . . ը . . . ը . . . և . . . ը . . . ը . . . այո՛ . . . ը . . . ը . . . ը . . . ըսելով քաշուեցաւ:

Մինչ ես, ըստ սովորականին, հաշիւները կը կարգադրէի գործաւորներուն և այլոց:

* * *

Յաջորդ շաբթուն սիրելի բարեկամս և Մեծանուն երգիծաբան ընկերս քիչ մը ցուրտ վերաբերումով մը սենեկս ներկայացաւ:

— Բարիդոյս սիրելիս, ըսի, ժպտուն դիմօք և մեղրակաթ թօնով մը:

— Եւ Աստուծոյ բարին, պատասխանեց ան, ու նստաւ սիկառ ի բերան:

— Քեզի լուր մը տամ, ըսի, միշտ չալունակելով խնդուք:

— Դրամի պէտք ունեցողին հետ կատակ չեն ըներ, պատասխանեց սիրելագոյն բարեկամս, և քրտինքները սրբելով, ձեռագրի մը սրբագրութեան սկսաւ:

— Նա՛, կերպնում, դրամ եկաւ . . . դրամ, ըսի, միշտ աչքերս իր աչքերուն մէջ: Այս պահուն Թօլայեան բացաքանչեց:

— Բանա՛կը, քանա՛կը . . .

— Երկու ոսկի, հարմնիքի մը առթիւ . . .

— A la bon hour! ճիշդ բնութաձա, ճիշդ սպասածս, Աստուած իմ, Աստուած իմ, դուն մինակ կը հասնիս ու կը հասցնես քու գթառատ բարիքներդ ինձ մեղաւորիս . . .

Չիլէ քաշող նորբնծայ մը ախչափ ալ ջերմեռանդ չ'պիտի աղօթեր:

Թօլայեան ոտքի ելած է այս պահուն, աչքերը վեր, ձեռքերը բաց, աչուկները թաց . . .

— Բայց, սիրելիս, գիտես որ այս երկու ոսկին . . .

— Բնական է որ երկուքը միասին իրաւունքս չէ, բայց մէկ հատին ընկեր ըլլալս երկու շաբաթէ ի վեր կերպազեմ . . .

— Լաւ, բայց պարտքդ, անցեալ շաբթուան բացը 67,50, 40 դրուշ ալ ձեռքէ տուածս . . .

— Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, սիրելիս, շաբթու գլուխ հաշիւէն կիջնանք . . . ըսելով երբ ձեռքերը չփելով ուսիս կը պըլ-

լուէր, պատկառելի երիտասարդ մը դռնէն ներս մտաւ ու կեցաւ մէջտեղը,

— Պր. Երուանդ Թօլայեան, հոս հրատարակուող չաբաթաթերթին ընդհ. տնօրէնը կրնամ տեսնել . . .

Թօլայեան գրասեղանին տակը կը նայի, չափելու չափելու համար թէ, արդեօք կրնայ սեղմիլ այս պահուն:

— Ինչ պիտի ըսէիք կը հարցնեմ զարմացած . . .

— Այսօր վճարելի պօնօ մը ունի երկու ոսկինոց . . .

— Շատ լաւ, դուք սիրելի բարեկամս Մեծ երգիծաբանը կը ճանչնա՞ք . . .

— Ոչ դժբաղդաբար, այս թուղթը ես գնած եմ, ինծի պիտի վճարուի . . .

— Լաւ, պօնօին ճիւղանթան ո՞վ է . . . կրնամ տեսնալ:

— Ինչո՞ւ չէ, էֆթիմի Սքուլաութիտէս, Քօնքօտիայի դռնապանը . . .

Անմիջապէս Թօլայեանին նայիլ կուգեմ, որ սակայն չերեւար: Թօլայեան վար, Թօլայեան վեր, մարդ չիկայ . . . : Մարդու կը կը սրտնեղի, երեսս կը նայի, դէմքիս գունատութենէն բաներ մը կը կուահէ, մինչ այս պահուն գրաշարներէն մին, թուղթի կտոր մը կը ներկայացնէ մատիտով գրուած:

« Բարեկամս կամ օգթախս,

« Հարսնիքի մը առթիւ գանձած երկու « ոսկիդ տուր, թուղթս պատուէ, չարթու « գլուխ հաշիւէն իջնալու պայմանաւ . . . »:

— Իրաւ թէ անցեալ շաբթու հոս էր այս ստորագրութեան տէրը, սակայն, այս շաբթու գլուխ հաշիւէն վար իջաւ . . . ըսի, պաղ արեամբ:

— Շատ լաւ, ո՞ւր իջաւ, կրնաք տեղը ըսել, որպէս զի երթամ գտնեմ զինքը, խօսք առաւ նորեկը, աչքերը խոշոր խոշոր բացած:

— Հաշիւէն վար իջաւ սիրելիս, ինչ գիտնամ, Թօլայեանին բառամանան չեմ բնական է, իջաւ, աղեկ որ իջաւ, որովհետեւ եթէ քիչ մըն ալ չիջնար, ես պիտի ստիպուէի իջնալ:

Մարդուկը անուշ լեզու (°) խօսքեր մը մրթմրթալով պոչին վրայ ետ դարձաւ, ու Թօլայեան սիրելի բարեկամս ծայր տուաւ:

— Գնաց, գնաց . . . մարդը գնաց Փափագեան . . .

— Եղբայր ի՞նչ հաշիւ է աս, չեմ հասկընար կոր, այս երկու ոսկինոց պօնօն . . .

— Կեցիր որ ըսեմ, մէկը ինծի դրամ տալ խօստացած էր, վերջերս ըսաւ որ տիտղոս մը, գործ մը գտիր որպէս զի վճատահիմ, ես ալ, Աստուած մեղք չի համարէ, այս մարդը գիտինը զարնելու համար Պատուարժան թերթիդ խմբագրատուն թիւնը ստանցնել խորհեցայ, յաջողեցայ ձեռնարկիս մէջ և 8 օրուան թուղթ մը ստորագրեցի երկու ոսկիի փոխան . . .

— Լաւ համոզուած էիր թէ հոս այդ գումարը պիտի շահէիր . . . ըսի զարմացած:

— Դրամը ուտելէս վերջը համոզուեցայ թէ չէ, բայց կերածս մարսած էի այլ հւս . . .

— Հիմա . . . ի՞նչ պէտք է որ ընենք . . . սիրելի բարեկամս և Մեծ երգիծաբանս Պր. Ե. Թօլայեան . . .

— Մաղթել, յաջողութիւն քու այսքան կնճռոտ գործիդ, և խնդրել հէլալութիւն այն հատուցման համար զորս չի զլացաք յանուն մեր գրական օրբախութեան, ըսելով առաւ քալեց խմբագրատունէն:

* * *

Եւ օր մըն ալ ըսին թէ՝ սիրելի բարեկամս Մեծանուն երգիծաբանը Ե. Թօլայեան Ծաղիկ գունագեղ (°) հանդէսին խմբագրատունը եղած է . . . երկու շաբթուան համար:

Ձեմ գիտեր թէ էֆթիմի Սքուլաութիտէսի երկու ոսկինոց պօնօն կրցաւ վճարել . . .

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ատաբազար. — Ս. Ս. էֆ. — Ձեր ղըրկած ոտանաւորը չենք կրնար հրատարակել, նիւթը մեր ուղղութեան չի համապատասխաներ, ուրիշի մը կ'սպասենք:

Տետե-Աղաճ. — Ա. Ա. է. էֆ. — Ձեր հաշիւները ճշգրտեցան, իսկ գալով թերթերուն առաքման, վստահ կրնաք ըլլալ թէ մենք գօնով թերթ չունինք քշելիք:

ԳՈՑ ՆԱՄԱԿ

ԾԱՂԻԿ ԿԱՆԱՑԻ ՀԱՆԴԵՍԻՆ ԶԱՄԲԻՂԷՆ
ԳՈՂՅՈՒԱԾ

Աշխիս պեպեքը, սիրտիս չախչախը
դագերանի ֆուրիկս .

Իմացածիս կէօրէ կնիկներն ալ պաշլա-
յերէն զազէթաճուլին ընել, է՛հ կըլլայ եա,
ինչու չընեն, զազէթաճիները երկու հոգով
չեն եա . . . բէք աղէկ խելք ես ըրեր
եալրում, Աստուած զիհնիդ կափը, ծառ-
քիդ թափը էլէլցունէ :

Առջի կլոխ հանած խաղէթայիդ մէջը
ըսեր էիր քիմ, ուլ քի սանկ նանկ խալէմ
կը պոնէ նէ թող կրողածը մուրոտէ խաւրէ
օր մենք ալ կոխենք : Իչտէ հիմաճուկ ես
հալէսիլ ըլլալովս ուղեցի քիմ մութվախի
տայլի ուտելիքները թարիֆ տամ գիւրդ,
պէլքի եարար կըլլայ կարգացողներուդ :

Հիմաճուկ մտիկ ըրէ, էյէր օր քիմ պէր-
նի համով բաթլիճան տօլմասի եփել ուտել
կուղէք նէ, (տիխաթ ալ չըրինք ամա, ա-
ճապ երկու հոգով կա՞յ մէջէրնիդ, չիլլայ
մէտէն ուղէ) առաջ քանի հատ քիմ բաթ-
լիճան կուղես նէ օլուխու թէնէքէով մէջի
փորը կը հանէս, տիխաթ պիտի ընես քիմ
չի պատուի, սօղումտան առ հանած փորըդ
պաղ ճուրով խուշհանէի մը մէջը կը դնես
կը մնայ, ասդին 12 կլոխ սոխը կը ճարթես,
(էկէր քիմ կէսուրըդ շատ կուտէ նէ երկու
կլոխ տահա իլավէ ըրէ) կը դընես թաւան
եաղով խալուումիչ կընես, տիօր օր քիմ,
դուրսէցի աղջկան մը եանախներուն պէս
կարմրի, ետքէն մէջը քիչ մը տօմաթէս,
մայտանօս, բրինձ, պիպէն ալ կը դընես կը
խառնես, սօղումտան, ան բաթլիճանին
մէջինները քիմ հանեցիր, իչտէ անոնք ալ
կը դընես կը խառնես տիօր քիմ համեր-
նին իրարու տան, անկէց սօղում վար կառ-
նես տօլմաները կը լեցունես, թէփէները կը
կոցես, խարեր ճուրով քէսկին կրակը կը
ղարնես, կիւռիւ կիւռիւ կիփի, վար առ-
նելուդ կիպի, խափախը պաղճազես, քէօլէ
մը պիտի դընես տիօր օր քիմ ինքզինքը

քաշէ, ետքէն մէկիկ մէկիկ թապախը կը
քաշես կըլլայ :

Ուտողաց անուշ :

So:lapku opnorpmayli

Աղած տօմաթէսները տիւզկիւնճէ կը
ղատես, կը լուսա, վրաներէն խուռուշ
խուռուշ սուր դանակով կը կտրես, ամա
սէրիէն չես զատեր, մէջը կը փորես կը
ձըգես :

Ասդին բուլթ միսի խըյմա, քիչ մը բրինձ,
պիպէն, աղ, մայտանօս կը դնես կը ծեծես,
քիչ մըն ալ քիչնիչ ֆըստըխ, սօղում կը
պոնես աս խըյման տօմաթէսներուն մէջը կը
լեցունես, սըրավարտի խուլախը սինիին
մէջը կը նստեցունես (հիմաճուկուան աղջկի-
ները նստեցունելը զօռ է ամա, տօմաթէսը
խօլայ կը նստի) : Ետքէն կտորճիկ մը դուր-
սէն եաղով քիչ մըն ալ միսի ճուրով կը
դընես մաղմաղը կը գթգթայ, ետքէն կու-
ղես նէ վրան քալէթայի թող ալ կանցու-
նես տահա համով կըլլայ, դուռն գիտես :

Ուտողաց անուշ :

Գատըն պուտի

Աֆ կընես աս կերակուրին անուշը քիչ
մը պիպիմիդ է ամա, սըրան եկաւ տէ թա-
րիֆ կընես կոր :

Աղուոր խըվըճըխ միսը կը դընես կը
ծեծես, բրինձով, մայտանօսով, պիպէնով,
տօմաթէսով, ետքէն միսը կը դընես կը խա-
շէս, խաշելէդ ետքը կլոր կլոր կը կտրես,
հալկիթով կը ապպկես :

Ուտողաց անուշ :

Խոյիցի լեզու

Իչտէ կալուրու մանճաններուն էն համովը,
կերակուրներուն էն խըյմաթլըն լեզուն է քի
կը խաշեն, պաղ սէօյիւչի պէս կուտեն :
Լեզու ըսածդ, ինսանի, իլլէ քէօս կէսուրի
լեզու քի ինչ ալ ընես չուտուիր, ձըգէ քի
հիմաճուկուան հարսերը անոր սալցան ույ-
տուրմիչ են ըրեր, բէք ալ աղուոր կուտեն
կոր, բապուճի խտար ալ ըլլայ զարար չու-
նի, հէրիք է քի վարպետ հարսերը վրան
սալցա մը պտուտցունեն :

Տահա պաշխա թէրթիպները գալ շար-
թու :

Սամլա-թօմրուխ

ՈՒՍՏԻԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ստոյգ աղբիւրէ մեզ կը հաւաստեն թէ անցեալ կիրակի Սկիւտար Մառ-քոյի պարտէզը այնքան ընտանեկան խառն բազմութիւն մը կայ եղեր, որ շատեր տունէն միմեկէր բերելով գոհացեր են :

— Եէնի-գարուէն մեզ լուր կուտան թէ՝ տեղացի օրիորդները հետեւելու համար օրուան մետային, այս տարի այնքան հագեր են փարակ ու ճերմակ՝ որ հիմայ ստիպուել են գրաւել անկողին վերմակ :

— Խաչի մեռելոցի օրը տեղացի շնորհունակ մը այնքան հագաց կարգացեր է, որ յոգնութենէն տունը փակուած այս տաքերուն թերթն կը կարգայ :

— Հայերէն պարզ ընթերցանութիւն գիտցող գալոցական շրջանաւարտ մը կուզուի խմբագրութեանս կողմէ, որպէս զի, տրձակներով մեզ զրկուած ոտանաւորները կարգայ : Գոհացուցիչ շաբաթական և ոսկի ակնոց մը նուէր :

— Պր. Լէսնիտասի երկրորդ անգամ Պոլիս այցելութեան առթիւ ջերմապէս կը յանձնարարենք մեր կարգ մը հարսկեսուրներու երթալ տեսնել անգամ մը, թէ վարպետ մարդու կը ինչպէս կարողացեր է հաշտեցնել չուն ու կատուն, որոնք զիրար հոտուրտուով մի և նոյն վայրին մէջ խաղեր կը կատարեն հանրութեան աչքին առջև :

— Տիւռինկ անուն Գերմանացի գիտուն մը յաջողած է հնարել տետակ մը բուռուա, որ մէկ անգամ քսուելուն մէկ շաբաթ իր փայլը կարող է պահելու : Սոյն հիշատարանը թուալէթին

ատուէսը տունելու համար դիմել խումբագրատուն, առկաի մնացած բաժնեգինները միասին :

— Սառը-եար եէնի-մահալէէն մեզ կը տեղեկացնեն թէ, օգափոխութեան համար հոն գտնուող ընտանիքները ստիպուած են չի բռնուելու համար բուրդ վերմակ և երկատասանեակներով ֆունէլայ փոխադրեր են հոն :

— Այս տարի Սկիւտարի Զիֆթիկը հազար զոհողութիւններով կազմակերպուած ընտիր Արեւելեան նուագաժողաց խումբէն գոհ չի մնացող զբօսասէր հասարակութեան պատշաճ է կրկնել սաարգար առածը « աննախնայ սիվրիսինէկ ոաղ, աննամախնայ տալուլ զուռնա ալ » :

— Օրաթերթի մը գրածին հայելով, կին մը երեք ամիսէ ի վեր քուն կը քաշէ եղեր իր բամբուլ անկողինին մէջ : Երանի թէ ամէնուն կինը այդպէս քունի իյնար, մահաւանդ ձմեռնամուտի ներկայ եղանակին, ուր « կուլեմ » ներու վերջը չի դար, ինչպէս նաեւ բացուելի կտնացի ծաղքերուն :

— Մեր սրամիտ աշխատակցէն Ե. Թօլայեանէն կը խնդրուի որ Մանգոլներ սինակներուն մէջ մեր Տնօրէն-Խմբագրութեան անձնական կառքին շուրջ շատ չի պտտի, որպէս զի մի գուցէ ագացի մը ճաշակէ ի վարձ իր ըրած ուէքլամին :

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԵՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Գաւաթի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԻՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանք տուողութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձեռնառն յատուկ ընտիր հաշուառներու, կանանց բեղրիներու և տղայոց չիք և գիմացկուն փոքրիկներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է։ Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

50—3

ՇԵՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Ս.ժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներն չեն նետեր, ջուրի և անձրեւի կը գիմանան, մոլկները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ։

Ներսի և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ։

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է առջն գնեցող իր վերայ առնել ամէն գործ, թէ ներկն և թէ գործաւորոյէն մէջն ըլլալով։

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պագըր-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան։ — Գաւառները գործակալներու պէտք կայ, դիւրամատչելի պայմաններով։

19—20

ՖԵՆԻՔՍ ՕՐԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1960 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՊ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀԻՊԵՋԻ ՃԻԻՊ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք։
ՖԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ։

ՖԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ առաջատանաւի վրայ։

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեքանաք խան, Թիւ 11—16։

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ։

Լիպգոր Գերկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՋՍՈՒՍՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՐ, ԱԺԱՆ

ԵԻ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեՊափու, Ճեյալ-Պեյ խան, քիւ 10

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն ինն ան-
դամներէ բաղկացած Խնամակալութիւն մը,
եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ
կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ
մը, հիմնական դաստիարակութիւն մը կու-
տայ բոլոր իրեն գիմով հայ աղջիկներուն:
Կ'աւանդուին բնական, իմաստասիրական,
չափական եւ այլ գիտութիւններ: Մասնաւոր
ոյժ կ'սրուի հայերէն եւ անգլ. լեզուներուն:
Կ'ուսուցուին նաեւ բուրքերէն եւ Ֆրանսե-
րէն լեզուները: Վարժարանին երկու ընդար-
ձակ եւ օդաւեժ շէնքերը, ինչպէս նաեւ
խնամակալութեան երկու բժիշկ անդամներ
մեծապէս կ'ապահովեն առակերտութիւններուն
առողջութիւնը: Անաստուի Եղիարուղին,
որուն մէկ մասնագիծը մինչեւ քաղաքս կ'եր-
կարի, համբարութիւնը խիստ դիւրին եւ
հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարե-
քուակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մաս-
նավճարով պէտք է հատուցանել: Դաշնակի
դասի համար 5 կամ 3 ոսկի կ'պահանջուի,
դասաւարտեան քիւրն համեմատ: Երգեհոնի
դասի համար 2 1/2 ոսկի կ'պահանջուի: Վար-
ժարանին ԻԱ. տարեւոյցանը կ'սկսի Սեպտ. 13
(Ն. Տ.), Դե. իրիկունը: Վարժարանին նոր
յայտագիրն ուղղութեան ձրի կ'ըրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր.
Բիքի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գր-
րել Տոգ. Ս. ԷՖ. Դավալեանի, Ասեմապէտ
Խնամակալութեան, Ասաբազար: 8-8

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս ԻԷ. տարեւոյցանը կըսկսի
Սեպտեմբեր 6 ին (Ն. Տ.): Հաստատութեան
Տնօրէն Վեր. Ռ. Զեյնալըս եւ իր Տիկինը
արդէն վերադարձած են իրենց երկամեայ
բացակայութենէն, եւ յառաջիկայ տարի ու-
սուցչական խումբին վրայ պիտի աւելնան
Քանասայի մէկ նշանաւոր համալսարանէն
երկու Ամերիկացի օրջանաւարտներ, որոնց
մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւ-
տրական դասընթացը:

Առակերտները բնական խնամք կը վա-
յելեն գիշերօթիկ ուսուցիչներուն, հաստա-
տութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան
եւ Տիկին Զեյնալըսի մայրական հոգածու-
թեան տակ:

Գիշերօթիկ առակերտներուն տարեքուակն
է 16 օսմ. ոսկի, 8 ոսկին Սեպտեմբերի սկիզ-
բը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը
վճարելի:

Վարժարանս յատուկ ուսուցիչ մը ունի
գործիական երաժշտութեան համար, այս
դասին համար տարեկան մասնաւոր վճա-
րումն է 1 1/2 ոսկի օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել
Մր. Բիքի Պայպըլ-Հաուս, Կ. Պոլիս, կամ
Տնօրէնութեան Պարտիզակ:

Այն առակերտները որոնք Պոլիսէն եկած
աւետներն կես զնով տուակ առնել կուզեն,
պէտք է որ մինչեւ Սեպտեմբեր 1, Ը. Ն. ի-
րենց անունները արձանագրել տան Գրիգոր
ԷՖ. Շահպազեանի, որ կը գտնուի ի Պայպըլ-
Հաուս քիւ 10: 10-8